01/10.5/3221-10
2010-03-12

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

պարոն ՀՈՎԻԿ
ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Աբրահամյան

Հայաստանի Հանրապետության կառավարությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորներ Արման Սահակյանի, Արայիկ Հովհաննիսյանի և Աշոտ Աղաբաբյանի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած «Հողի հարկի արտոնություններ տրամադրելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ սկզբունքային առարկություններ չունի, թեև նախագծի հիմնավորման մեջ ներկայացված չեն «Հողի հարկի արտոնություններ տրամադրելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի կիրարկման արդյունքները։

Հայտնում ենք, որ, ներկայացված օրենքի նախագիծը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում քննարկելիս, հարակից զեկուցմամբ հանդես կգա Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարի առաջին տեղակալ Վ. Տերտերյանը։

Հարգանքով՝

Տիգրան Սարգսյան

Նախագիծ
Պ-837-23.02.2010-ՏՀ-010/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«Հողի հարկի արտոնություններ տրամադրելու մասինե Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին

Հոդված 1. «Հողի հարկի արտոնություններ տրամադրելու մասինե Հայաստանի Հանրապետության 2009 թվականի ապրիլի 7-ի ՀՕ-79-Ն օրենքի 2-րդ հոդվածի «2009ե թիվը փոխարինել «2010ե թվով։

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրվանից։

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՆԱՎՈՐՈՒՄ

«Հողի հարկի արտոնություններ տրամադրելու մասինե Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունման անհրաժեշտության մասին

Սույն օրենքի ընդունման կարեւորությունն ու հրատապությունը պայմանավորված է «Հողի հարկի արտոնություններ տրամադրելու մասինե Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված արտոնությունների ժամկետի երկարաձգման անհրաժեշտությամբ։

«Հողի հարկի արտոնություններ տրամադրելու մասինե Հայաստանի Հանրապետության օրենքի ընդունումից հետո բազմաթիվ հարկատուներ օգտվել են տրամադրված հարկային արտոնություններից, ինչն էլ որոշակիորեն նպաստել է վերջիններիս սոցիալ-տնտեսական վիճակի բարելավմանը։

Միաժամանակ բազմաթիվ քաղաքացիներ, ինչպես նաեւ համայնքների ղեկավարներ դիմել են Հայաստանի Հանրապետական կուսակցությանը՝ բարձրացնելով հիշյալ արտոնություններից օգտվելու ժամկետը մինչեւ 2010 թվականի դեկտեմբերի 31-ը երկարացնելու հարցը։ Խնդիրը կայանում է նրանում, որ հարկատուների մի մասը տարբեր օբյեկտիվ հանգամանքներով պայմանավորված չեն կարողացել օգտվել տրամադրված հարկային արտոնություններից, որն էլ սույն օրենսդրական նախաձեռնությամբ հանդես գալու պատճառ է հանդիսացել։

Կարծում ենք նման քայլը՝ էականորեն կթեթեւացնի այդ արտոնությունից մինչեւ այժմ չօգտված հարկատուների վիճակը, հնարավորություն տալով իրենց ունեցած միջոցներն ուղղել գյուղատնտեսական նշանակության հողերի մշակման աշխատանքներին։